ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«___» նոյեմբեր 2026 թվականի N ____-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՕՀԱՆԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ «ԺԱՅՌԱՓՈՐ ՀԱՄԱԼԻՐ» ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՏԱՐԱԾՔԻ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՆ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ ՇԱՀ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ հոդվածների դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հանրության գերակա շահ ճանաչել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Օհանավան բնակավայրի վարչական սահմաններում «Ժայռափոր համալիր» պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի զբաղեցրած տարածքի և տարածքին կից քաղաքացիների սեփականությունը հանդիսացող՝ 0,46144 հեկտար 02-112-0143-0271, 0,18 հեկտար 02-112-0143-0002 կադաստրային ծածկագրերով հողամասերը՝ (իրադրության հատակագիծ)՝ համաձայն հավելվածի::

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Օհանավան բնակավայրի վարչական սահմաններում «Ժայռափոր համալիր» պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի զբաղեցրած տարածքի և տարածքին կից քաղաքացիների սեփականությունը հանդիսացող հողամասերի (այսուհետ՝ գույք) նկատմամբ հանրության գերակա շահ ճանաչել հետևյալ հիմնավորումներով.

1) պատմության և մշակույթի անշարժ հուշարձան (այսուհետ՝ հուշարձան) համարվող՝ Հայաստանի Հանրապետության Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Օհանավան բնակավայրի վարչական սահմաններում «Ժայռափոր համալիր» հուշարձանի զբաղեցրած տարածքի և տարածքին կից

հողամասերի նկատմամբ հանրության գերակա շահ ճանաչելը հնարավորություն կտա ապահովելու հուշարձանի և դրա պատմական միջավայրի պահպանությունը, անխոչընդոտ իրականացնել հնագիտական ուսումնասիրությունները (հետախուզում և պեղումներ), բացված հնագիտական կառույցների ամրակայումը և վերականգնումը, պատմամշակութային արժեքի բացահայտումը, պահպանական գոտում օգտագործման պայմանակարգի (ռեժիմի) պահպանումը և շրջակա տարածքներում իրականացվող հողային և գյուղատնտեսական աշխատանքների նկատմամբ հսկողությունը.

2) սույն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում նշված նպատակների իրականացման շահը գերակայում է օտարվող սեփականության սեփականատիրոջ շահերից, քանի որ՝

ա. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Օհանավան բնակավայրի վարչական սահմաններում «Ժայռափոր համալիր» հուշարձանի զբաղեցրած տարածքի և տարածքին կից հողամասերի նկատմամբ հանրության գերակա շահ ճանաչելու դեպքում հնարավոր կլինի ամբողջացնել և միավորել հուշարձանի տարածքը, այն օգտագործել իր սկզբնական և մշակութային, ինչպես նաև գիտական, կրթական ու ճանաչողական նպատակներով,

բ. թույլ կտա ապահովել հուշարձանի պատմամշակութային արժեքի նախնական տեսքի պահպանման և հնագիտական հետագա ուսումնասիրությունների իրականացումն ու խնամքը,

գ. իր գործառնական նշանակությամբ օգտագործման անհրաժեշտությունից ելնելով՝ հնարավորություն կստեղծվի լուծելու հուշարձանի զբոսաշրջային նպատակով հետագա օգտագործման հարցը,

դ. Հուշարձանի զբաղեցրած տարածքի և տարածքին կից հողամասերի հողամասերի նկատմամբ հանրության գերակա շահի ճանաչումը հնարավորություն կտա մոտակա համայնքների բնակչությանը լիարժեք մասնակցելու զբոսաշրջային ծրագրերի իրականացմանը:

3. Սահմանել, որ՝

1) գույքը ձեռք բերող է Հայաստանի Հանրապետությունը, որի անունից հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետը.

2) գույքի օտարման գործառույթների իրականացումը համակարգող պետական լիազոր մարմինը Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն է, իսկ օտարման գործառույթների իրականացման համար պատասխանատու տարածքային

կառավարման մարմինը՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետը.

3) գույքի օտարման գործընթացն սկսելու վերջնական ժամկետը 2026 թվականի դեկտեմբերի 31-ն է.

4) հանրության գերակա շահ ճանաչված տարածքների և դրանում առկա սեփականության օբյեկտների նկարագրության արձանագրության կազմման աշխատանքներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունվարի 25-ի N 108-Ն որոշմամբ սահմանված կարգով և որոշմամբ սահմանված նկարագրության արձանագրության օրինակելի ձևով՝ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երեք ամսվանից մինչև մեկ տարվա ընթացքում:

4. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուն հաջորդող յոթ օրվա ընթացքում որոշումը պատշաճ ձևով ուղարկել օտարվող գույքի սեփականատերերին և օտարվող գույքի նկատմամբ պետական գրանցում ունեցող գույքային իրավունքներ ունեցող անձանց.

2) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում գույքի անկախ գնահատող կազմակերպության միջոցով ճշտել գույքի համարժեք փոխհատուցման ենթակա գումարի չափը և առաջարկություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն.

3) գույքի ձեռքբերումից հետո ապահովել գույքի նկատմամբ գույքային իրավունքների պետական գրանցումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ու ժամկետներում և միջոցներ ձեռնարկել հողամասերի նպատակային նշանակության փոփոխման ուղղությամբ՝ հողերի նպատակային նշանակությունը փոխադրելով հատուկ պահպանվող տարածքների հողերի պատմական և մշակութային գործառնական նշանակության հողի:

4) գույքի ձեռքբերումից հետո միջոցներ ձեռնարկել հանրապետական նշանակության հուշարձանի նկատմամբ գույքային իրավունքների գրանցման և դրա սպասարկման նպատակով առանձնացվող հողամասի նպատակային նշանակության փոփոխման ուղղությամբ՝ հողի նպատակային նշանակությունը փոխադրելով հատուկ պահպանվող տարածքների հողերի պատմական և մշակութային գործառնական նշանակության հողի:

5. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը՝

1) սույն որոշման 4-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված աշխատանքներն, ինչպես նաև գույքի ձեռքբերման համար անհրաժեշտ միասնական տեղեկանքների ստացման և նոտարական գործառույթների իրականացման ծախսերն իրականացնել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության միջոցների հաշվին.

2) սույն որոշման 4-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված աշխատանքների ավարտից հետո Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել 2026 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը հատկացված ֆինանսական հատկացումների վերաբաշխում կատարելու և օտարվող գույքի սեփականատերերին փոխհատուցման նպատակով գումար տրամադրելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Ն. Փաշինյան**

Երևան

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՕՀԱՆԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ «ԺԱՅՌԱՓՈՐ ՀԱՄԱԼԻՐ» ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՏԱՐԱԾՔԻ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՆ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ ՇԱՀ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Իրավական ակտի անհրաժեշտությունը

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Օհանավան բնակավայրի վարչական սահմաններում «Ժայռափոր համալիր» պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի զբաղեցրած տարածքի և տարածքին կից նկատմամբ հանրության գերակա շահ ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է հուշարձանի տարածքն ամբողջականացնելու, պահպանությունն ապահովելու, ուսումնասիրություններ իրականացնելու, հնագիտական պեղումները կազմակերպելու, պահպանված կառույցների մնացորդների ամրակայման և վերականգնման և հուշարձանի օգտագործման նպատակով ներդրումային ծրագրերի իրականացման անհրաժեշտությամբ: Իրավական ակտով կապահովվի նաև «Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի առաջին մասին Է) կետի պահանջները, ըստ որի Ժայռափոր համալիրը» պետք է լինի Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձան:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

2024 թ. փետրվարին հայտնի դարձավ, որ Օհանավան գյուղի բնակիչ Մարատ Հայրապետյանի կողմից հողային աշխատանքներ են իրականացվել Քասախի կիրճի ձախակողմյան հատվածում, որի արդյունքում հայտնաբերվել է այս ժայռափոր համալիրը: Պեղվել է նույն տարում: Համալիրը բաղկացած է ժայռափոր դամբարանից և տարբեր գործառույթներ ունեցող մի քանի կառույցներից: Առավել ուշագրավ է ժայռափոր դամբարանը, որի մուտքի մոտ, ժայռի մեջ փորված է խորան՝ Սուրբ սեղանով: Վերջինիս վերևի և ստորին հատվածները կրասվաղով հարթեցված են՝ եզրերը դեպի դուրս: Այն ունի գեղեցիկ բուսածաղկային մշակում, ինչպես նաև՝ շրջանակի մեջ առնված հավասարաթև խաչ, ինչը ևս փաստում է համալիրի վաղ քրիստոնեական լինելը:

Դամբարանը գմբեթաձև է, հարավային հատվածում ժայռը որոշակի խորությամբ մշակված է: Դամբարանի չափերն են՝ 295 x 135 սմ: Կամարաձև մուտքը հյուսիսից է, կողքերը մշակված են երկու կիսագլաններով, ունի խարիսխով ու խոյակով սյան տեսք: Վերին հատվածում կա լուսամուտ: Դռան բարձրությունը 150 սմ է, իսկ լայնությունը՝ 70 սմ: Մուտքի արևելյան հատվածում քառակող կոթողի քանդակազարդ պատվանդան կա:

Դամբարանի ներսում, ժայռի մեջ փորված են երկու գերեզմաններ: 2024 թ. պեղումների ընթացքում հայտնաբերվել են մարդկային ոսկորների մնացորդներ: Առաջին գերեզմանի չափերն են՝ 1,50 x 50 x 70 սմ, խցի վրա դրված է երկթեք վերնամասով, 110 x 50 x 17 սմ չափերով տապանաքար: Երկրորդ խցի չափերն են՝ 1,65 x 40 x 85 սմ:

Դամբարանի մուտքից աստիճանաձև թեքվող ճանապարհն ուղղված է դեպի երկրորդ կառույցը: Այն ևս ժայռափոր է, սակայն արևմտյան պատը, որտեղ տեղակայված է մուտքը, շարված է տուֆից՝ կրաշաղախով: Կրաշաղախը հիմնականում քայքայված է և ենթակա է փլուզման: Մուտքը 50 սմ է, բարավորի վրա ունի մեծ ճեղքվածք: Ժայռափոր կառույցի երկարությունը 270 սմ է, լայնությունը՝ 157 սմ: Ուսումնասիրությունից պարզվել է, որ այն արևելյան կողմում ունի խորանի նմանվող կիսաշրջանաձև լուծում (ենթադրվում է, որ հոգևոր կառույց է):

Հոգևոր կառույցի տանիքից վերև գտնվող հարթակի հյուսիս-արևելյան կողմում պեղումներից բացվել է ժայռի մեջ փորված հնձանի հորը, որի առագաստը, ցավոք, չի պահպանվել:

Հնձանահորի կենտրոնում առկա էր նստվածքի համար նախատեսված փոսիկը (տրամագիծը՝ 75 սմ, խորությունը՝ 24 սմ): Հուշարձանի հյուսիս-արևելյան կողմում գտնվում է տնտեսական նշանակության ժայռափոր կառույց: Մուտքի դիմաց սալաքարով (60 x 52 սմ) ծածկված, դեպի հյուսիս ուղղված օդամուղ անցքով, 35 x 50 սմ չափերով թոնիր կա:

Համալիրի հնագիտական նյութերի ուսումնասիրության հիման վրա կարելի է եզրակացնել, որ համալիրում ամփոփված են երևելի անձինք: Այն առնվազն մինչև XIII դ. կեսերը տեղացիների համար հեղինակավոր ուխտատեղի է եղել:

3. Կարգավորման նպատակը

Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի տարածքի ամբողջացման արդյունքում կապահովվի պահպանությանն ուղղված միջոցառումների իրականացումը և «Ժայռափոր համալիր» պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի զբաղեցրած տարածքի և տարածքին կից հողամասերի նկատմամբ հանրության գերակա շահ ճանաչելու դեպքում կներառվեն այն հողամասերը, որոնք կապահովեն հուշարձանի հետագա պահպանությունը, վերականգնումն ու կենսագործունեությունը:

4. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Նախագիծը մշակվել է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարության կողմից:

5. Ակնկալվող արդյունքը.

Որոշման ընդունման արդյունքում կապահովվեն հուշարձանների պատշաճ պահպանության և օգտագործման գործընթացները, բարենպաստ պայմաններ կստեղծվեն հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառում

լիազոր մարմնի, պետական կառավարման մարմնի, հանրության կողմից «Ժայռափոր համալիր»-ի պահպանության և օգտագործման խնդիրների լուծման համար:

6. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Օհանավան բնակավայրի «Ժայռափոր համալիր» պատմության և մշակույթի անշարժ հուշարձանին կից հողամասերի նկատմամբ հանրության գերակա շահ ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման նախագծի ընդունման կապը ռազմավարական փաստաթղթերի հետ.

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Օհանավան բնակավայրի վարչական սահմաններում «Ժայռափոր համալիր» պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի զբաղեցրած տարածքի և տարածքին կից հողամասերի նկատմամբ հանրության գերակա շահ ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը բխում է «Հայաստանի վերափոխման ռազմավարության» 2050 ցուցանիշների Մեր ազգային արժեքները մասի 10-րդ կետից՝ նկատի ունենալով, որ «Ժայռափոր համալիր» հուշարձանը հանդիսանում է ազգային արժեքների նյութական ժառանգության բաղադրիչների կարևորագույն մասը, հայ ժողովրդի պատմության, պետականությանն առնչվող հնագույն ժամանակաշրջանի նշանակալի դրսևորումներից, ուստի այն առավել դիտարժան և գրավիչ դարձնելը, գովազդելը, զբոսաշրջային ծրագրերում հուշարձանը ներառելու գործոնը հավաստագրելը, զբոսաշրջիկների քաղաքակիրթ սպասարկումը, սննդի, հանգստի կազմակերպումը զգալիորեն առնչվում է այցելուների սպասարկման համար նախատեսված օբյեկտների առկայության հետ: Գործընթացի իրականացմամբ կապահովվի նաև արժեքավոր հուշարձանի պահպանական միջոցառումների կազմակերպումը՝ հուշարձանի ամրակայման, տարածքի բարեկարգման աշխատանքների ապահովումը, զբոսաշրջային նպատակներով հուշարձանի գովազդումը և հանրահռչակումը, մշակութային և էկոտուրիզմի զարգացումը:

ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի Հայաստանի Հանրապետության ձեռքբերումը կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին N 1902-L որոշմամբ հաստատված N 1 հավելվածի «Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն բաժնի «Մշակույթ մասի 33-րդ կետով սահմանված պահանջի հետ կապը հուշարձանի պահպանությանն առնչվող իրավական կարգավորման հնարավորության ապահովումն է, հասարակությանը հուշարձանների տարածքների կարգավիճակին և գույքային պատկանելության իրազեկման հարցում հստակ տեղեկատվության գործընթացի իրականացումն է:

7. Լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտությունը և պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում սպասավելիք փոփոխությունները.

«Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Օհանավան բնակավայրի վարչական սահմաններում «Ժայռափոր համալիր» զբաղեցրած տարածքի և տարածքին կից հողամասերի հանրության գերակա շահ ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունումը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում առաջացնում է լրացուցիչ ծախս սեփականատիրոջ գույքի նկատմամբ հանրության գերակա շահ ճանաչելու պահանջով՝ օտարվող գույքի գնահատման արդյունքում հաշվարկված շուկայական արժեքի չափով:

ՏԵՂԵԿԱՆՔ

Իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկման վերաբերյալ

Իրավական ակտի նախագծի անվանում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՕՀԱՆԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ «ԺԱՅՌԱՓՈՐ ՀԱՄԱԼԻՐ» ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՏԱՐԱԾՔԻ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՆ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ ՇԱՀ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Իրավական ակտի նախագիծ մշակող մարմնի անվանում

Կրթության, գիտության,մշակույթի և սպորտի նախարարություն

Իրավական ակտի տեսակ

Որոշում

Ոլորտ

Պատմամշակութային անշարժ ժառանգության պահպանություն

Հանրային քննարկման ժամկետ

07/11/2025 - 23/11/2025

Ստացված առաջարկների արդյունքներ

Չի ստացվել

Տեղեկանքը գեներացվել է www.e-draft.am կայքի կողմից

01/12/2025

Հավելված
ՀՀ կառավարության 2026 թվականի
--------- -ի N -Ն որոշման

ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՕՀԱՆԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ «ԺԱՅՌԱՓՈՐ ՀԱՄԱԼԻՐ» ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՏԱՐԱԾՔԻ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՆ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ ՇԱՀ ՀԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Արագածոտն, Աշտարակ, գ. Օհանավան



Активация Win
Чтобы активировать
раздел "Параметры

Հողամաս (02-112-0143-0271)			
Հատակագծի սահմանային կետերի համարները	Կոորդինատներ		Հեռավորություններ (մ)
	X	Y	
1	8448486.8251	4469226.7516	13.77
2	8448492.0889	4469239.4792	18.70
3	8448502.5288	4469254.9961	18.70
4	8448512.9686	4469270.5129	24.46
5	8448523.3208	4469292.6737	24.73
6	8448547.1830	4469299.1791	35.26
7	8448581.2018	4469308.4534	20.60
8	8448586.6192	4469288.5821	43.86
9	8448580.4644	4469245.1547	14.52
10	8448573.0904	4469232.6422	26.15
11	8448547.9710	4469225.3818	45.00
12	8448547.9710	4469270.3825	20.00
13	8448527.9707	4469270.3825	45.00
14	8448527.9707	4469225.3818	41.17
1	8448486.8251	4469226.7516	

Հողամաս (02-112-0143-0002)			
Հատակագծի սահմանային կետերի համարները	Կոորդինատներ		Հեռավորություններ (մ)
	X	Y	
1	8448527.9708	4469180.3812	45.00
2	8448527.9707	4469225.3818	45.00
3	8448527.9707	4469270.3825	20.00
4	8448547.9710	4469270.3825	45.00
5	8448547.9710	4469225.3818	45.00
6	8448547.9710	4469180.3812	20.00
1	8448527.9708	4469180.3812	

Որակավորում ունեցող անձ	Կարինա Յուրիանցիրսյան
Որակավորման վկայականի համարը	0323
Ստորագրություն	
Իրավաբանական անձի անվանումը	ԱՁ ՏԱՐՈՆ-ԿԱՐՏԱՆՅԱՆ ՍՊԸ
ԳՀՀ	67088635
Ստորագրություն	

ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Արագածոտն, Աշտարակ, գ. Օհանավան



Հողամաս (02-112-0143-0271)			
Շրջադարձային (բեկման) կետեր	Կոորդինատներ		Գծային չափերը (մ)
	X	Y	
1	8448486.8251	4469226.7516	
2	8448492.0889	4469239.4792	13.77
3	8448502.5288	4469254.9961	18.70
4	8448512.9686	4469270.5129	18.70
5	8448523.3208	4469292.6737	24.46
6	8448547.1830	4469299.1791	24.73
7	8448581.2018	4469308.4534	35.26
8	8448586.6192	4469288.5821	20.60
9	8448580.4644	4469245.1547	43.86
10	8448573.0904	4469232.6422	14.52
11	8448547.9710	4469225.3818	26.15
12	8448547.9710	4469270.3825	45.00
13	8448527.9707	4469270.3825	20.00
14	8448527.9707	4469225.3818	45.00
1	8448486.8251	4469226.7516	41.17

Հողամաս (02-112-0143-0002)			
Շրջադարձային (բեկման) կետեր	Կոորդինատներ		Գծային չափերը (մ)
	X	Y	
1	8448527.9708	4469180.3812	
2	8448527.9707	4469225.3818	45.00
3	8448527.9707	4469270.3825	45.00
4	8448547.9710	4469270.3825	20.00
5	8448547.9710	4469225.3818	45.00
6	8448547.9710	4469180.3812	45.00
1	8448527.9708	4469180.3812	20.00

Որակավորում ունեցող անձ	Վաղինակ Հովհաննիսյան
Որակավորման վկայականի համարը	0323
Ստորագրություն	
Իրավաբանական անձի անվանումը	Ա/Ձ ՏԱՐՈՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՐԻ
ՀՎՀՀ	67088635
Ստորագրություն	

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՕՀԱՆԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ «ԺԱՅՌԱՓՈՐ ՀԱՄԱԼԻՐ» ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՏԱՐԱԾՔԻ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՆ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ ՇԱՀ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. ՀՀ Քաղաքաշինության կոմիտե	**03.11.2025 թ.** **01/18.1/18155-2025**
«Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Օհանավան բնակավայրի «Ժայռափոր համալիր» պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի զբաղեցրած տարածքի և տարածքին կից հողամասերի նկատմամբ հանրության գերակա շահ ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ քաղաքաշինության կոմիտեն առաջարկություններ և դիտողություններ չունի:	Ընդունվել է
2. ՀՀ Կադաստրի կոմիտե	**04.11.2025 թ** **ՍԹ/20487-2025**
Ի պատասխան Ձեր 2025 թվականի հոկտեմբերի 27-ի N 01/14.4/35653-2025 գրության՝ «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Օհանավան բնակավայրի «Ժայռափոր համալիր» պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի զբաղեցրած տարածքի և տարածքին կից հողամասերի նկատմամբ հանրության գերակա շահ ճանաչելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերաբերյալ հայտնում ենք հետևյալը. Նախագծի 1-ին կետի համաձայն՝ հանրության գերակա շահ է ճանաչվում նաև «Ժայռափոր համալիր» պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի զբաղեցրած տարածքը, մինչդեռ վերջինիս տեղադիրքի և չափերի վերաբերյալ տեղեկատվություն չի ներկայացվել: Ուստի առաջարկում ենք ևս մեկ անգամ ճշգրտել	Ընդունվել է Ընդունվել է

հանրության գերակա շահ ճանաչվող հողամասերի ցանկը՝ միաժամանակ Նախագծում որպես հավելված ներառելով դրանց WGS-84 (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով կազմված հատակագծերը՝ շրջադարձային կետերի կոորդինատներով: Առաջարկում ենք նաև Նախագծի 4-րդ կետի՝ 1) 1-ին ենթակետում «սեփականության» բառը փոխարինել «գույքի» բառով, 2) 3-րդ ենթակետից հանել «ու սահմանափակումների» բառերը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 3.1-ին կետի կարգավորումների համաձայն՝ պետական գրանցման օբյեկտը հուշարձան հանդիսանալու մասին տեղեկությունը գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման բնագավառի լիազոր մարմինը ներառում է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականում, հետևաբար նշված դեպքերում սահմանափակման պետական գրանցում չի իրականացվում, 3) 4-րդ ենթակետում «գույքային» բառը փոխարինել «նկատմամբ գույքային իրավունքների» բառերով:	Ընդունվել է
Միաժամանակ հայտնում ենք, որ «Գնահատման գործունեության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնահատման գործունեությունը կազմակերպում և իրականացնում են գնահատման կազմակերպությունները՝ գնահատման պատվերի հիման վրա՝ գնահատողի միջոցով, իսկ նույն օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնահատման արդյունքները ձևակերպվում են գրավոր փաստաթղթի տեսքով՝ գնահատման հաշվետվությամբ: Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է Նախագծի 4-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված «գույքի անկախ գնահատող կազմակերպության միջոցով ճշտել գույքի համարժեք փոխհատուցման ենթակա գումարի չափը» դրույթը հստակեցնել: Տեղեկացնում ենք նաև, որ Անշարժ գույքի էլեկտրոնային տեղեկատվական շտեմարանի տվյալների համաձայն՝ Նախագծի 1-ին կետում նշված 02-112-0143-0271 կադաստրային ծածկագրով հողամասի նկատմամբ առկա են գրանցված սահմանափակումներ (ԴԱՀԿ ծառայության 2019 թվականի փետրվարի 6-ի «Պարտապանի գույքի վրա արգելանք դնելու մասին» N Ո00986-56521/19 և	Չի ընդունվել Գույքի գնահատումը կիրականացվի որոշման ընդունումից հետո

2020 թվականի ապրիլի 10-ի «Պարտապանի գույքի վրա արգելանք դնելու մասին» N Ո00556-79339/20 որոշումներ), որոնք սահմանված կարգով վերացված չեն:	
3. ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմ	**03.11.2025 թ** **01//07333-2025**
«Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Օհանավան բնակավայրի «Ժայռափոր համալիր» պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի զբաղեցրած տարածքի և տարածքին կից հողամասերի նկատմամբ հանրության գերակա շահ ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմն առարկություններ չունի:	Ընդունվել է
4. ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	**07.11.2025թ.** **ԴԽ/14.1/38334-2025**
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը քննարկել է «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Օհանավան բնակավայրի «Ժայռափոր համալիր» պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի զբաղեցրած տարածքի և տարածքին կից հողամասերի նկատմամբ հանրության գերակա շահ ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը և կից ներկայացնում է նախագծի վերաբերյալ առաջարկությունները: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ նախագիծը ներկայացրել ենք ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի քննարկմանը և տրամադրում ենք վերջինիս դիրքորոշումը: **Առաջարկություններ** **«Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Օհանավան բնակավայրի**	Ընդունվել է

«Ժայռափոր համալիր» պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի զբաղեցրած տարածքի և տարածքին կից հողամասերի նկատմամբ հանրության գերակա շահ ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ 1. ՀՀ սահմանդրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով Սահմանադրությամբ նախատեսված մարմինները կարող են օրենքով լիազորվել ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր: Լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին:* «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *(...) Ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը ունենում է նախաբան, որում նշվում է օրենսդրական իրավական ակտի հոդվածը կամ մասը, որը ներառում է Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված լիազորող նորմեր:* **Նախագծի նախաբանում ի թիվս այլնի հղում է կատարված «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ և 38-րդ հոդվածներին: Մինչդեռ, նշված իրավական ակտերը չեն կարող ուղղակի կերպով լիազորել ՀՀ կառավարությանը ընդունել սույն որոշումը, ուստի ոչ վերաբերելի իրավական ակտերը նախագծի նախաբանից անհարաժեշտ է հանել, կամ ներկայացնել հիմնավորում դրանք նախագծում ներառելու համար: Անուղղակիորեն լիազորող նորմերը կարող են նախագծի հիմնավորման մեջ արտացոլվել:** 2. Նախագծի 1-ին կետով նախատեսվում է քաղաքացիներին պատկանող տարածքների նկատմամբ հանրության գերակա շահ ճանաչել, մինչդեռ նախագծի	Ընդունվել է Ընդունվել է

հիմնավորման մեջ ներկայացված է հիմնավորում մեկ քաղաքացու սեփականության իրավունքի վերաբերյալ: 3. Նախագծի 5-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսվում է ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը՝ *սույն որոշման 4-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված աշխատանքների ավարտից հետո* ՀՀ կառավարություն ներկայացնել 2025 թվականի պետական բյուջեով ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը հատկացված ֆինանսական հատկացումների վերաբաշխում կատարելու և օտարվող գույքի սեփականատերերին փոխհատուցման նպատակով գումար տրամադրելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ: **Հարկ է նկատել, որ փոխհատուցման վերաբերյալ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից ՀՀ կառավարության որոշման նախագիծ ներկայացնելու համար ժամկետներ սահմանված չեն:** 4. Նախագծի 4-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսվում է, որ *սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում* գույքի անկախ գնահատող կազմակերպության միջոցով ճշտել գույքի համարժեք փոխհատուցման ենթակա գումարի չափը և առաջարկություն ներկայացնել ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը: **Գտնում ենք, որ գույքերի գնահատումը և փոխհատուցումը կետք է լինի նախնական, կամ որոշման ընդունմանը զուգահեռ, որպեսզի նաև իրավասուբյեկտների համար կանխատեսելի լինի արենց գործողությունները) հետևյալ հիմնավորմամբ՝** Քաղաքացիական օրենսգրքի 218-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարումն իրականացվում է օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով՝* **միայն նախնական և համարժեք փոխհատուցմամբ:** **Վերոգրյալի առնչությամբ իրավական դիրքորոշումը տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2006 թվականի ապրիլի 18-ի թիվ ՍԴՈ-630 որոշմամբ:**	Չի Ընդունվել Գույքի գնահատումը կիրականացվի որոշման ընդունումից հետո Ընդունվել է

5. Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 7-րդ մասի իրավական ակտերի նախագծի առաջին էջի վերևի աջ անկյունում պետք է գրվի «ՆԱԽԱԳԻԾ» բառը: 6. Նախախագծի 2-րդ կետի 1) -ին ենթակետում «զբաղեցրած» բառը կրկնվում է առաջարկում ենք հանել: 7. Նախագծի վերնագրից հետո «սեպտեմբեր» բառը փոխարինել «նոյեմբեր» բառով:	
5. ՀՀ Ֆինանսների նախարարություն	**19.11.2025թ.** **01/11-1/25228-2025**
Ի պատասխան Ձեր սույն թվականի հոկտեմբերի 27-ի N 01/14.4/35653-2025 գրության՝ ՀՀ Ֆինանսների նախարարությունն ուսումնասիրել է «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Օհանավան բնակավայրի «Ժայռափոր համալիր» պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի զբաղեցրած տարածքի և տարածքին կից հողամասերի նկատմամբ հանրության գերակա շահ ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը և հայտնում է, որ դիտողություններ և առաջարկություններ չունի:	Ընդունվել է
ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՕՀԱՆԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ «ԺԱՅՌԱՓՈՐ	

ՀԱՄԱԼԻՐ» ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՏԱՐԱԾՔԻ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՆ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ ՇԱՀ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Օհանավան բնակավայրի «Ժայռափոր համալիր» պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի զբաղեցրած տարածքի և տարածքին կից հողամասերի նկատմամբ հանրության գերակա շահ ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

1. Նախագծի նախաբանում հղում է կատարված «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» օրենքի 4-րդ հոդվածին, այս առումով հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերոնշյալ օրենսդրական կարգավորումը նախատեսում է գերակա հանրային շահի նպատակն, ուստի, անհրաժեշտ է հստակեցնել որպես Նախագծի համար լիազորող նորմ հանդիսացող «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» օրենքի 4-րդ հոդվածի համապատասխան մասը:

2. Նախագիծն անհրաժեշտ է խմբագրել՝ համապատասխանեցնելով «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» օրենքի 7-րդ հոդվածի կարգավորումներին: Մասնավորապես՝ «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով

սեփականության օտարման մասին» օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի «զ» պարբերությամբ նախատեսված է, որ հանրության գերակա շահ ճանաչելու մասին կառավարության որոշման մեջ, ի թիվս այլնի, նշվում են նաև օտարման նպատակի իրագործումը սկսելու և ավարտելու վերջնաժամկետները, որի վերաբերյալ կարգավորումները, սակայն, Նախագծում բացակայում են: 3. Առաջարկում ենք Նախագծի 1-ին և 2-րդ կետերը միավորել՝ կրկնությունից խուսափելու և բովանդակային ամբողջականությունն ապահովելու համար: 4. Միաժամանակ առաջարկում ենք խմբագրել Նախագծի հավելվածը՝ վերջինիս բովանդակությունը բաժանելով երկու առանձին հավելվածների, քանի որ առկա բովանդակության պայմաններում այն ընթեռնելի չէ: 5. Միաժամանակ հայտնում ենք, որ 2026 թվականի հունիսի 18-ին Կառավարությունն ընդունել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 10-ի N 1146-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 880-Ն որոշումը, որով հանրության գերակա շահ ճանաչելու մասին Կառավարության որոշումների նախագծերի համար նախատեսվել է հանրային քննարկումների իրականացման հատուկ կարգ, ներառյալ՝ հանրային լսումների անցկացման, փաստաթղթերի հրապարակման պարտադիր պահանջներ և այլ ընթացակարգային առանձնահատկություններ: Ուստի, Նախագծի համատեքստում անհրաժեշտ է հիմք ընդունել Կառավարության 2026 թվականի հունիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության	

կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 10-ի N 1146-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 880-Ն որոշմամբ նախատեսված պահանջները՝ իրավական ակտերի հանրային քննարկումներն իրականացնելով որոշմամբ նախատեսված կարգին համապատասխան:	